ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 187 – Ա **06 ապրիլի 2021 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 61 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 6-ի N 914-Ն որոշման 12-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» N 61-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետով հաստատված հավելված 3-ի՝ «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության, 4.9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4.9 Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ:

Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից

լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես կազմակերպության կանոնադրական գործառույթներն իրականացնելու համար լրացուցիչ հատկացում, տրամադրվում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ կազմակերպությանը փոխանցելու համար:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:»:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մետաքսյա Սուվարյանին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը՝ կազմակերպության միջոցների հաշվին.

2) կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

06.04.2021

X

ԳԵՂԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ

Կազմված է 06. 04 2021թ.
Բաղկացած է 2 (երկու) թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ_____

Հավելված

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզպետի
2021 թ. ապրիլի 06 -ի
N 187 - Ա որոշմամբ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

----------Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից 01.07.2015թ.
գրանցման թիվ 76.210.863366

ՀՎՀՀ 08209316

01.07.2015թ. գրանցված
կանոնադրության թիվ _____
փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

--------- ---------- 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ՎԱՂԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն»» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 4.9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4.9 Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ:

Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես կազմակերպության կանոնադրական գործառույթներն իրականացնելու համար լրացուցիչ հատկացում, տրամադրվում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ կազմակերպությանը փոխանցելու համար:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:»: